



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30825
Մայիս 1, 1989

Մեծայարգ
Տիար Տիրան Գրաճեան
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Պիմկհամթըն.

Յարգելի Տիար Գրաճեան,

Ապրիլ 10-ին ստացուած է Եկեղեցոյդ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Դեկտեմբեր 4, 1988-ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւնատու գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Կրէյս Պարսաւէթ
Տոբթ: Վահէ Կարապետեան
Տիրան Գրաճեան